

**ՎԱՍԱԿԻ ՀԵՔԻԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
քարքառ (խոսվածք)**

Ըլել ա, չի ըլել մի սարում մի բինա ա ըլել, էդ բինումն ըլել ա տասը դագավոր, տասը
դագավորից մինը խնոցի ա հարել:

Դա մի տղա ա ունեցել, անումը՝ Վասակ:

Էդ մոտիկ հրեանների տղեր անցը կանչել ա, եղապատառ ա տվել.

Ասում ա.— Փետ չունեմ,— էն եղապատառ տվող կնիկը,— իմ Վասակին էլ վեկալեք, գացեք
փետ բերեք:

Չորս ուրիշ էրեխա էլ Վասակի հետ են ընկնում, հինգը ֆոքով գնում են:

Մերին են դնում, որ փետ պտին անիլ, էն չորս ֆոքին դես ու դեն են վրա անցնում, որ փետ
հավաքեն, Վասակը դայիմ նստում ա:

Վասակին ասում են.— Դու էլ վե կաց, փետի վրա անցի՛:

Վասակը ասում ա.— Ես խի՞ եմ վրա անցնում, իմ մերը ձեզ եղապատառ ա տվել, դուք պտեք
փետ անիլ:

Փետ անելիս տեղը շատ մըլոլ են անում, փետերը որ անում են, պրծնում, շլակում, Վասակին
ասում են.— Շան հաչոցի վրա գնա՞նք, թե՞ մուրը տեղի:

Վասակն ասում ա.— Շան հաչոցի վրա գնանք՝ շները կըկծեն, մո՛ւթը տեղի վրա գնանք:

Մուրը տեղի վրա գնում են, տենում են մի լիս ա էրևում: Էդ լիսի վրա գնում են, գնում են
տենում են, որ ըտի մի տուն կա, էդ տան միջին մի մըրդագել պառավ կա, պառավին մի ախշիկ
ունի՝ հյուրիմալաք: Վասակի աչքին դուր ա գալի: Մտիկ ա անըմ էս պառավին, որ մարդակեր
ա, քշերն իրանց ուտիլ պտի:

Տեղերը շինում են, էն չորս հնգերը քնում են: Պառավը ճրաքը հանգցնում ա, մի քիչ անսասա ա
անում, որ վեկենա ուտի էդ տղերանցը:

Վասակի քունը տանում չի, էն տղերքը բան չեն գլխի ընկնում:

Պառավը ձեն ա տալի,— Ո՞վ ա քուն, ո՞վ ա զարթուն:

Վասակն ասում ա.— Վասակ ախպերը:

Պառավն ասում ա.— Վասակ ախպե՛ր, խի՞ չես քնում:

— Քու հավերի կճկըճոցից մարդի քուն կտանի՞:

Պառավը գնում ա ինչ հավ կա՝ խեղդում ա:

Դրա գնացած տեղը Վասակը մի հնգորը դուս ա տանում, պահում, տեղը բերում մի փետ
դնում: Էլի պառավը դի ա տալի.— Ո՞վ ա քնով, ո՞վ ա զարթուն:

Քու դագերի կճկըճոցից օքմընի քուն կտանի՞,— ասում ա Վասակը:

Նա գնում ա դագերը խեղդելու, Վասակը մի հնգորն էլ ա դուս տանում, տեղը փետ դնում: Տուն
ա գալի պառավը, դի ա տալի.— Ո՞վ ա քուն, ո՞վ ա զարթուն:

Վասակն ասում ա.— Վասակ ախպերը:

— Վասակ ախպե՛ր, խի՞ չես քնում:

— Զիանու խրխնջոցից օքմընու քոսն կտանի՞:

Գնում ա պառավը ձիանոնցը ջարդում ա. դրա գնացած վախտը Վասակը մի հնգորն էլ ա դուս
տանում, տեղը փետ դնում:

Պառավը եդ տուն ա գալի, դի ա տալի.— Ո՞վ ա քնով, ո՞վ ա զարթուն:

¹ Փայտ հավաքիր—Օ. Բ.:

Վասակը դի ւ տալի.— Վասակ ախպէ՛րը:

— Վասակ ախպէ՛ր, իմ^օ չես քնում:

— Տըվարների բռանչելուցը քունս տանում չի:

Գնում ւ պառավը տավարնին էլ ջարդում:

Նրա գնացած վախտը մի հնգորն էլ ւ դուս տանում, տեղը փետ գնում ու հնգորտանցն ասում ւ.— Էկեք գնա՛նք, հըմի պառավը թող տավարնին ջարդի: Գնում են:

Պառավը գալիս ւ տուն, էլի դի տալի.— Ո՞վ ւ քուն, ո՞վ ւ զարթուն:

Տենում ւ ձեն չկա: Իրեք հետ ձեն ւ տալի, ուրախանում ւ, ասում ւ.— Քնել են, գնամ չիմնուն էլ ուտեմ:

Գալիս ւ տենում ւ տղերանց տեղը փետ ւ դրած, մնում ւ իրան տանը փռմանած:

Նրա գնացած վախտը, էն տղերքը, ճամփեն կես են արել, որ էն սարը պտի հասնին, Վասակն ասում ւ.— Զխպլիկս մնացել ւ, եդ պտեմ գնալ:

Հընգերտինքն ասում են.— Մարդագելից անչախ պրծել ես, հմի էլ ե՞դ պտիս գնալ:

Ասում ւ.— Անհնարին ւ, պետք ւ գնամ:

Ասում ւ ու եդ դառնում, գնում: Գնում ւ պառավի տունը: — Ո՞ր ւ չխպըլիկս,— ասում ւ պառավին:

Պառավն ասում ւ.— Էկա՞ր, Վասակ ջա՛ն, քու անուշ մսին կարոտ եմ, եդ ւ էկել ես, կուտեմ:

Վասակն ասում ւ.— Հա՛, լավ կանես:

Ուզում ւ, որ Վասակին գա բռնի, ուտի, պառավի էն հյուրի-մալաք ախչիկը տենում ւ, որ Վասակը շատ սիրուն ւ, աչքին շատ դիր ւ գալի: Ընչկել մոր թրին հասնիլը, թուրը բերում ւ Վասակին տալի, մերը թրին ման ւ գալի, գտնում չի:

Ասում ւ.— Հըմի կերթամ փըշըրտորեմ կուտեմ:

Գիտի ոչ, որ թուրը Վասակի ձեռին ւ: Գնում ւ Վասակի կուշտը, որ փըշըրտորիլ պտի, Վասակը թուրը հանում ւ, պառավին տալի, էրկու կտոր անում: Հյուրիմալաք ախչկանը վեր ւ ունում ու պառավի հարստությունն էլ ւ տանում: Գնում ւ իրան տուն, օխտն օր, օխտն քշեր հրսանիք անում, պսակվում:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին: Չարը ընդի, բարին ըստի:

Աստըծանե իրեք խնձոր վեր ընկավ մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարքին: